

Մրաքեւ ընդ գետն
 եւ ձգեալ գոսկեօղ
 Շիկափոկ պարանն
 Ընկեց ի մէջք
 Օրիորդին Ալամաց
 եւ շատ ցաւեցոյց
 Զմէջք փափուկ օրիորդին
 Արագ հասուցեալ
 Ի բանակն իւր :

Փակազծի մէջ ըսենք, թէ արեւելեան սո-
 վորութիւն մըն էր այսպէս աղջիկ փախցնել :
 Արեւելեան ուրիշ ազգերու զիւցազներգու-
 թեանց մէջ ալ կարելի է հանդիպել նման դըր-
 ուազներու : Այսպէս, Ֆիրդուսին, նման տո-
 դեր ունի «Ռուսթէմ եւ Զօհրապ»ին մէջ, երբ
 Հէճիր Զօհրապին հետ մենամարտելով զերի
 կը բռնուի, իսկ անոր քոյրը Զօհրապին զէմ
 կռիւի կ'ելլէ . ու հոն այսպէս տող մը կայ .
 «Գլեց ինկաւ փոկը մէջքին եւ նա բռնեց աղջկը-
 կան» :

Ու դարձեալ պարերգուններն են, որ կը
 պատմեն Արտաշէսի եւ Սաթենիկի փառաշուք
 հարսնիքը .

Տեղ տեղայր ոսկի
 Ի փեսայութեան
 Արտաշէսի
 Տեղայր մարգարիտ
 Ի հարսնութեան
 Սաքինկան :

Պարերգուններն են նորէն, որ կը պատմեն
 Արտաշէսի Արտաւազը տղուն չար հոգին, ա-
 նոր զիււական ծագումը .

Վիշապագունի գողացան
 Զմանուկն Արտաւազի
 եւ դե փոխանակ եղին :

Արտաշէս, իր բեղուն կեանքին վախճանին
 հասած եւ իր մահը զգացած, կարծես չէր ու-
 դեր աշխարհէն բաժնուիլ եւ իր հայրենի երկ-
 րին գեղեցկութեանց պապակը կը զգար տակա-
 ւին : Անոր բերնով է, որ կը խօսի այս անգամ
 Արտաշէսը անձնաւորող զերասանը ինքը .

Ո՛ր տայր ինձ գծուխ ծխանի
 եւ գառաօտն նաւասարդի,
 Զվագելն եգանց եւ զվագելն եղջերուաց,

Մեք փող հարուստ եւ քմրկի հարկանէտք,
 Որպէս օրէն է քագաւորաց :

Կը մեռնի սակայն Արտաշէս, ու ամէնքը
 կ'ողբան իր մահը՝ յանձն առնելով իր հետը
 թաղուիլ, ինչպէս սովորութիւն էր հին ատեն-
 ները : Արտաւազը կը բռնկի նախանձէն : Զայն
 անձնաւորող զերասանն է, որ կը խօսի հոս .

Մինչ դու գնացեր, եւ գերկիրս ամենայն ընդ-
 շեց տարար
 Ես աւերակացս ո՞րպէս քագաւորեմ :

Արտաշէս, իր մահուան քունին մէջ, կը
 սրտմտի իր չար, նախանձոտ տղուն դէմ : Իր
 դերը կատարող զերասանը, զերեզմանին կամ
 դազազին մէջէն, կը պոռթկայ սա անէծքը .

Դու յոյս հեծցիս յԱզատ ի վեր ի Մասիս
 Զքեզ կալցեն քաջք, տարցեն յԱզատ ի վեր
 ի Մասիս
 Անդ կացցես եւ գլոյս մի տեսցես :

Ինչպէս կը տեսնուի, Արտաշէսի կեանքը
 պատմող այս հէքեաթը ոչ զանազան անկապ
 քերթուածներէ կը բաղկանայ, եւ ոչ ալ միակ
 ընդարձակ քերթուածէ մը . ան տեսակ մը
 թատերախաղ է, հին յունական ողբերգու-
 թեանց ոճով, ուր զերակատարները եւ պարեր-
 դուները կը լրացնեն նիւթը :

Այսպէս պէտք է եղած ըլլան նաեւ մեզի
 հասած ու չհասած միւս երգերը : Բեմական
 դրուադի մը մասերը պէտք է կազմած ըլլան
 նաեւ Երուանդեան Տիգրանի վրայ հիւսուած
 երգերը, որոնցմէ ոմանց իմաստը կուտայ Սո-
 բնացին եւ որոնց ամենէն գեղեցիկն է Տիգ-
 րանի դովքը, հաւանաբար պարերգուներուն
 բերանը զրուած : Այս դրուադին կը խառնուի
 նաեւ Աթրահակի աւանդակէպը :

Ու բեմական ուրիշ դրուադի մը կեղերոնա-
 կան դէմքն է Վահագնը, որուն քաջութիւնը
 պատմող երգերը պէտք է բազմաթիւ եղած ըլ-
 լան՝ դատելով Սորենացիի պատմած դրուադ-
 ներէն, որոնցմէ Վահագնի ծնունդը միայն
 հասած է մեզի .—

Երկնէր երկին եւ երկիր
 Երկնէր եւ ծիրանի ծով...